ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-ԻՆ, ԺԱՄԸ 11-00-ԻՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՄԲ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի տեղակալ՝** **Խաչատուր Մկրտչյանի**
- **Արմավիր համայնքի ղեկավար՝** **Վարշամ Սարգսյանի**
- **Վաղարշապատ համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝** **Արսեն Պետրոսյանի**
- **Մեծամոր համայնքի ղեկավարի պարտականությունները կատարող՝** **Էդգար Հովհաննիսյանի**
- **Արաքս համայնքի ղեկավար՝** **Ղազար Ղազարյանի**
- **Խոյ համայնքի ղեկավար՝** **Արգիշտի Մեխակյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավար՝** **Դավիթ Մինասյանի**
- **Բաղրամյան համայնքի ղեկավար՝** **Շանթ Առաքելյանի**
- **Ֆերիկ համայնքի ղեկավար՝** **Ռուստամ Հասանյանի**
- **Փարաքար համայնքի ղեկավարի Առաջին տեղակալ՝** **Լյուդվիգ Գյուլնազարյանի**
- **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար՝** **Հովհաննես Մարտիրոսյանի**
- **ՆԳՆ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետ՝** **Արթուր Բդոյանի**
- **ԱԱԾ Արմավիրի մարզային վարչության պետ՝** **Ռաֆիկ Բոխյանի**
- **Արմավիրի մարզի դատախազ՝** **Վահան Սարգսյանի**
- **Քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետ՝** **Հրաչյա Ղազարյանի**
- **ՆԳՆ փրկարար ծառայության Արմավիրի մարզային փրկարարական վարչության պետ՝** **Հովհաննես Մարգարյանի**
- **Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի Արմավիրի տարածքային բաժնի պետ՝** **Արսեն Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Արման Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Սերյոժա Գրիգորյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Դավիթ Թունանյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Անի Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Աննա Սիմոնյանի**

- **Արմավիրի մարզի համայնքների վարչական ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Լրատվամիջոցների ներկայացուցիչների**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. Արմավիրի մարզի խորհրդի 2024 թվականի ապրիլի 2-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

/Դավիթ Խուդաթյան-
Արմավիրի մարզպետ/

2. Գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների ընթացքը Արմավիրի մարզում

/ Արթուր Այվազյան – Արմավիրի մարզպետի աշխատակազմի
գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության
վարչության պետ /

3. Ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների ընթացքը Արմավիրի մարզում

/ Վահագն Արշակյան– Արմավիրի մարզի <<Արմավիր>> ՋՕԸ–ի
գործադիր տնօրեն
Սամվել Սարգսյան– Արմավիրի մարզի <<Շենիկ >> ՋՕԸ–ի
գործադիր տնօրեն
Ռազմիկ Գաբրիելյան– Արմավիրի մարզի <<Էջմիածին >> ՋՕԸ–ի
գործադիր տնօրենի տեղակալ/

4. Արմավիրի մարզում ընդերքօգտագործման և հողային հարաբերությունների բնագավառներում տիրող իրավիճակի, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների իրականացման, ինչպես նաև նշված բնագավառներում ներգրավված իրավապահ և այլ մարմինների համագործակցության վերաբերյալ

/ Արթուր Այվազյան –Արմավիրի մարզպետի աշխատակազմի
Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության
վարչության պետ,
Խորեն Սարուխանյան– Արմավիրի մարզպետի աշխատակազմի
քաղաքաշինության, հողաշինության և
ենթակառուցվածքների կառավարման
վարչության պետի պարտականությունները կատարող/

Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը մինչև մարզի խորհրդի նիստի օրակարգում ընդգրկված հարցերին անդրադառնալը և օրակարգը հաստատման

ներկայացնելը, ողջունելով մարզի խորհրդի նիստի մասնակիցներին, նիստին ներկա Հրաչյա Ղազարյանին շնորհավորեց Քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության պետի պաշտոնում նշանակվելու կապակցությամբ, ցանկանալով նրան քաջառողջություն և հետագա հաջողություններ աշխատանքային գործունեության ընթացքում:

Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը միաժամանակ շնորհավորեց Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի ղեկավար Շանթ Առաքելյանին ծննդյան օրվա առիթով, ցանկանալով նրան քաջառողջություն և արգասաբեր գործունեություն՝ ի շահ համայնքում առկա բազմաբնույթ խնդիրների արդյունավետ լուծման և ազգաբնակչության կենսամակարդակի բարձրացման:

Այնուհետև Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը Արմավիրի մարզի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր կողմից սահմանված << **Արմավիրի մարզի խորհրդի 2024 թվականի ապրիլի 2-ի նիստի օրակարգը հաստատելու մասին** >> որոշման նախագիծը:

Արմավիրի մարզի խորհրդի

որոշումը

Արմավիրի մարզպետի սահմանած Արմավիրի մարզի խորհրդի 2024 թվականի ապրիլի 2-ի նիստի օրակարգը հաստատելու մասին

Ղեկավարվելով Կառավարության 2020 թվականի ապրիլի 30–ի N 647-Ն որոշմամբ սահմանված մարզի խորհրդի կազմավորման և գործունեության կարգի 12–րդ կետի պահանջով.

Արմավիրի մարզի խորհուրդը

որոշում է՝

1. **Հաստատել Արմավիրի մարզպետի սահմանած Արմավիրի մարզի խորհրդի 2024 թվականի ապրիլի 2-ի նիստի օրակարգը:**

Օրակարգային՝ <<**Գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների ընթացքը Արմավիրի մարզում**>> երկրորդ հարցի կապակցությամբ

զեկուցմամբ հանդես եկավ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը: Նա նշեց, որ 2024 թվականի գարնան գյուղատնտեսական աշխատանքներին Արմավիրի մարզպետի աշխատակազմը, մարզի համայնքները, ջրօգտագործողների ընկերությունները, տնտեսավարող գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունները և ֆերմերները սկսել են նախապատրաստվել դեռևս 2023 թվականի նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներից՝ մարզի զարգացման գերակա ուղղությունները և առաջնահերթ խնդիրները որոշելով և դրանք լուծելու համար համապատասխան ծրագրերի մշակմամբ: Որպես բուսաբուծական ուղղվածության մարզ՝ դեռևս ձմեռվանից կարևորվել է գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստական փուլը՝ որպես ամուր հիմք, բերքառատ տարվա համար: Անհարաժեշտ է արձանագրել որպես ձեռքբերում այն կարևոր փաստը, որ տարեց – տարի փոխվում է մարզի հողօգտագործողների հոգեբանությունը. նրանք դառնում են ավելի ինքնուրույն և նախաձեռնող: Ավելին, ագրարային ոլորտում տնտեսավարող յուրաքանչյուր սուբյեկտ պետական ընդհանուր ծրագրերի շրջանակում ինքնուրույն է լուծում իր տնտեսության հիմնախնդիրները, աստիճանաբար վերանում է նրանց կախվածությունը պետական համակարգից և տեղափոխվում են շուկայական հարաբերությունների ոլորտ:

Վերջին տարիներին գարնանային հրատապ աշխատանքների իրականացման շրջանակներում մարզում առաջնային տեղ են գրավում մարզի տարածքում գետերի գարնանային հեղեղումների դեմ պայքարի աշխատանքների կազմակերպումը: 2024 թվականին գարնանային հնարավոր հեղեղումները ժամանակին և արդյունավետ անցկացնելու նպատակով Արմավիրի մարզպետի 08.02.2024թ. N ՄՈ/70-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբն արդեն ուսումնասիրել է մարզի տարածքով հոսող Արաքս, Քասախ, Մեծամոր գետերի հեղեղատարների ափապատնեշների փաստացի վիճակը, առաձնացվել են առաջնահերթ մաքրման ենթակա տարածքները, որոնք ներկայացվել են Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և Ջրային կոմիտե: Մարզի գյուղատնտեսական արտադրության զարգացմանը նպաստող կարևոր բնագավառ է հանդիսանում ստորգետնյա ջրերի մակարդակի իջեցման, հողերի

կրկնակի աղակալումից և ճահճացումից պաշտպանվելու նպատակով կոլեկտորոդրենաժային համակարգի անխափան գործունեության ապահովումը: 2024 թվականին նախատեսված է մարզի Ջրառատ, Արազափ, Հայկաշեն, Գայ, Գրիբոյեդով, Արտաշար, Ակնաշեն, Արգավանդ, Տարոնիկ, Արտիմետ բնակավայրերում մաքրել 44180 մետր ընդհանուր երկարությամբ բաց դրենաժային համակարգ:

Մարզում գարնան գյուղատնտեսական նախապատրաստական աշխատանքների շարքում՝ որպես արհեստական ոռոգվող երկրագործության տարածք, առաջնահերթ նշանակություն ունի ոռոգման համակարգերի մաքրման և վերանորոգման աշխատանքների իրականացումը: Ներկա իրավիճակը ոռոգման համակարգը սպասարկողներից և ջրօգտագործողներից պահանջում է առավել կազմակերպված ու բարեխղճորեն կատարելու համակարգի կառուցման, մաքրման և վերանորոգման աշխատանքները, որպեսզի հնարավոր լինի արդյունավետ օգտագործել ոռոգման ջուրը, կորուստները հասցվեն մինիմումի:

Ոռոգման համակարգերի կառուցումը, պահպանումը և արդյունավետ շահագործումը մշտապես գտնվել են Արմավիրի մարզպետի և Կառավարության ուշադրության կենտրոնում:

Արմավիրի մարզպետի 01.03.2024թ. N ՄՈ/126-Ա որոշմամբ ստեղծված աշխատանքային խումբը ներկայումս ուսումնասիրում է մարզի ոռոգման համակարգերի նախապատրաստական աշխատանքները, ստուգում է մաքրման և վերանորոգման աշխատանքների վիճակն ըստ բնակավայրերի:

Հունվար ամսվա ընթացքում մարզի ջերմոցային տնտեսությունները նախապատրաստվել են, ներկրվել է տորֆ, ձեռք է բերվել անհրաժեշտ քանակությամբ բանջարանոցային մշակաբույսերի սերմացու, կարտոֆիլի տնկանյութ և բազմամյա տնկարկների համար արմատակալներ և տնկիներ:

Ներկա դրությամբ մարզում ավարտվել է ապակյա և պոլիէթիլենային թաղանթի տակ գտնվող ջերմատնային տնտեսություններում ելակի, բանջարեղենի տարբեր տեսակների ցանքի և սածիլների աճեցման աշխատանքները, ինչպես նաև շուրջ 1500հա պոլիէթիլենային թաղանթի տակ մշակվող վաղահաս բանջարեղենի սածիլների ցանքը:

Ավարտվել է բազմամյա տնկարկների էտի, ձևավորման և առաջին բուժման աշխատանքները: Կառավարությունը գյուղատնտեսության ոլորտում անում է ամեն ինչ ազգաբնակչության պահանջարկը տեղական արտադրության գյուղատնտեսական մթերքներով ապահովելու ուղղությամբ, հնարավորինս պակասեցնելով մթերքների ներկրումը, ավելացնելով մթերքների տեսականու և քանակի արտահանման ծավալները:

Հատկանշական է, որ ընթացիկ տարում նույնպես շարունակվելու են Կառավարության կողմից գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման նպատակով տրամադրվող աջակցության ծրագրերը:

Օրակարգային հարցի քննարկման արդյունքներով Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը, ի գիտություն ընդունելով զեկուցմամբ ներկայացված տեղեկատվությունը և անհրաժեշտ համարելով գյուղատնտեսության ոլորտում ընթացիկ տարվա ընթացքում պլանավորած պետության կողմից ցուցաբերվող աջակցության ծրագրերին ազգաբնակչությանը պատշաճ կերպով իրազեկելու խնդիրը, Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանին հանձնարարեց՝ ակտիվորեն համագործակցել մարզի համայնքների ղեկավարների, նրանց աշխատակազմերի, ինչպես նաև համայնքների վարչական ղեկավարների հետ ընթացիկ տարում իրականացվող ծրագրերի վերաբերյալ ազգաբնակչությանը հնարավորինս իրազեկելու և նրանց տեղեկացվածությունը պատշաճ կերպով ապահովելու նպատակով:

Օրակարգային՝ **<<Ոռոգման սեզոնի նախապատրաստական աշխատանքների ընթացքը Արմավիրի մարզում>>** երրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկան Արմավիրի մարզի <<Արմավիր>> ՋՕԸ–ի գործադիր տնօրեն Վահագն Արշակյանը, <<Շենիկ>> ՋՕԸ–ի գործադիր տնօրեն Սամվել Սարգսյանը և <<Էջմիածին >> ՋՕԸ–ի գործադիր տնօրենի տեղակալ Ռազմիկ Գաբրիելյանը: Նրանք իրենց զեկուցումներում ընդհանուր տեղեկատվության կարգով ներկայացրեցին իրենց կողմից շահագործվող ոռոգման համակարգերում ծրագրված գարնան նախապատրաստական աշխատանքների ընթացքի մասին: Այսպես, <<Արմավիր>> ՋՕԸ–ի

գործադիր տնօրեն Վահագն Արշակյանը մասնավորապես նշեց, որ «Արմավիր» ջրօգտագործողների ընկերությունը շահագործում է 117 կմ երկարությամբ միջտնտեսային, 2670 կմ երկարությամբ ներտնտեսային ոռոգման ջրանցքներ, իրենց կառուցվածքներով 45 փոքր ու մեծ ջրհան կայաններ, 180 խորքային հորեր: Վերոնշյալ համակարգերում ընթացիկ տարվա ծրագրված գարնան նախապատրաստական անհրաժեշտ աշխատանքները կավարտվեն ապրիլի 13-ին, ոռոգման ջրի մատակարարումը կիրականացվի ապրիլի 15-ից: Այսօրվա դրությամբ կատարվել է համակարգերում նորոգման և մաքրման նախատեսված աշխատանքների 70-75%-ը: Նա միաժամանակ նշեց, որ ընթացիկ նորոգման և մաքրման ծախսերի չափը պլանավորվում են ընկերությանը ժամանակավոր շահագործման տրված համակարգերը գործուն վիճակում պահելու համար:

<<Շենիկ>> ՋՕԸ–ի գործադիր տնօրեն Սամվել Սարգսյանը մասնավորապես նշեց, որ <<Շենիկ>> ջրօգտագործողների ընկերությունը սպասարկում է 12 վարչական տարածք, որտեղ ընդհանուր կարգով առկա է 10185,0 հա կադաստրային հողատարածք:
28.03.2024 թվականի դրությամբ ընկերությունն արդեն ոռոգման ջրի մատակարարման հայտ է կնքել ջրօգտագործողների հետ (9122,0 հա կադաստրային հողատարածք):

Նախատեսված մաքրման աշխատանքներ՝

1. միջտնտեսային ջրանցքներ 20.9 կմ - մաքրվել է 18.2 կմ,
2. ներտնտեսային ջրանցքներ 311 կմ - մաքրվել է 61.5 կմ, որից 17 կմ՝ առվահանով (առվահանության աշխատանքներին մնացել է մոտ 225 կմ):

Նախատեսված նորոգման աշխատանքներ՝

1. միջտնտեսային ջրանցքներ 27 կմ - նորոգվել է 7 կմ,
2. ներտնտեսային ջրանցքներ 101 կմ - նորոգվել է 26 կմ:

Ավտոկռունկով կատարվում են քայքայված կիսախողովակները խոշորացված հողերի չգործող ներտնտեսային ցանցի կիսախողովակներով փոխարինման աշխատանքներ:

Առկա բոլոր 15 խորքային հորերը վերազինվել են ուլտրաձայնային հոսքաչափերով:

Խորքային հորերից պատրաստ է 12 հատը, իսկ 3 հատը ենթակա է նորոգման :

Առկա 7 պոմպակայաններից պատրաստ է 4 հատը:

Ժամանակին վերանորոգվել են բոլոր տեխնիկա–տրանսպորտային միջոցները.

<<Շենիկ>> ՋՕԸ–ի գործադիր տնօրեն Սամվել Սարգսյանը միաժամանակ հավաստիացրեց, որ գարնան նախապատրաստական աշխատանքներն ակտիվորեն շարունակվում են և ընկերությունը ոռոգման սեզոնն սկսելուն պատրաստ կլինի:

<<Էջմիածին >> ՋՕԸ–ի գործադիր տնօրենի տեղակալ Ռազմիկ Գաբրիելյանը, որպես նախաբան, համառոտ ներկայացրեց 2023 թվականի բարդ և սակավաջուր տարվա ընդհանուր ցուցանիշները՝ դրական փոփոխություններով՝

- ջրի խնայողություն -16,3 մլն. մ^3,
- ոռոգելի հողատարածքների ավելացում - 507,2 հա,
- ջրօգտագործման պայմանագրերի ավելացում - 260 հատ,
- ընդհանուր ծախսերի տնտեսում - 147,2 մլն. դրամ,
- էլէներգիայի տնտեսում - 1 մլն. 464 կվտ - 68,3 մլն. դրամ,
- գումարների հավաքագրում - ավելացում շուրջ 30 մլն. դրամ:

Ըստ զեկուցողի, ներկայացված ցուցանիշները հիմք են ստեղծում 2024 թվականին ավելի կայուն, նպատակային և արդյունավետ ջրամատակարարման և հաշվառման աշխատանքները կազմակերպելու համար: Նախապատրաստական աշխատանքների կազմակերպման և համակարգման նպատակով «էջմիածին» ՋՕ ընկերությունում պարբերաբար տեղի են ունենում աշխատանքային օպերատիվ խորհրդակցություններ, ոլորտի մասնագետներին տրվում են համապատասխան հանձնարարականներ:

<<Էջմիածին >> ՋՕԸ–ի գործադիր տնօրենի տեղակալ Ռազմիկ Գաբրիելյանը առանձնահատուկ նշեց, որ «էջմիածին» ՋՕ ընկերությունում ընթացիկ տարվա գարնան նախապատրաստական բոլոր աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը իրականացվում է մրցույթով: Առ 01.04.2024թ. դրությամբ կազմակերպվել է թվով 21 մրցույթ, որի արդյունքում ընտրված կազմակերպությունների հետ կնքվել է 25 պայմանագիր: Կատարված աշխատանքները 01.04.2024թ. դրությամբ ներկայացված են աղյուսակով՝ ըստ բնակավայրերի:

Ներկայացված տվյալներից ուզում եմ առանձնացնել հետևյալ ցուցանիշները՝

- կանավակապատելով առվահանություն - 480 կմ ջրանցք,
- ձեռքով մաքրում - 145 կմ ջրանցք,
- մեխանիզմով էքսկավատորով մաքրում - 142 կմ ջրանցք:

01.04.2024թ. դրությամբ մաքրված է՝ 677,7 կմ ներտնտեսային ոռոգման ցանց և 19,4 կմ միջտնտեսային ոռոգման ջրանցքներ:

<<Էջմիածին >> ՋՕԸ–ի գործադիր տնօրենի տեղակալ Ռազմիկ Գաբրիելյանը, իրազեկման կարգով տեղեկացրեց նաև, որ 2024 թվականի հունվարի 1-ից արգելվում է ջրառի կետերից առանց ջրաչափիչ հաշվիչների իրականացնել ջրառ:

Ընկերությունում շահագործվող 181 խորքային հորերի վրա տեղադրվում են համապատասխան ուլտրաձայնային ջրաչափեր: Այդ աշխատանքներն իրականացնող կազմակերպությունն ընտրված է մրցութային կարգով և արդեն տեղադրված է 85 հատ ջրաչափ:

Ընկերության կողմից շահագործվող թվով 6 միջտնտեսային ջրանցքների վրա նույնպես տեղադրվում են 231 հատ համապատասխան համակարգով աշխատող ջրաչափական սարքավորումներ: Աշխատանքներն իրականացնող կազմակերպությունը նույնպես մրցութային կարգով է ընտրված:

<<Էջմիածին >> ՋՕ ընկերության սպասարկման տարածքում ոռոգման համակարգերում իրականացվող բոլոր նորացման և վերականգնման աշխատանքները՝ անկախ պատվիրատուից, իրականացնող շինարարական կազմակերպություններից, ֆինանսավորման աղբյուրից, գտնվում են վերահսկողության տակ և 2023 թվականից սկսած <<Էջմիածին>> ՋՕ ընկերության կողմից նախագծերը քննարկվում են՝ տեղում համագործակցելով համայնքային իշխանությունների հետ: <<Էջմիածին >> ՋՕԸ–ի գործադիր տնօրենի տեղակալ Ռազմիկ Գաբրիելյանը ակտիվ համագործակցության համար ընկերության տնօրինության անունից շնորհակալություն հայտնեց համայնքների ղեկավարներին:

2023 թվականից սկսվել և շուտով կավարտվի նաև «Խոյ» համայնքի Արշալույս

բնակավայրի հատվածում գտնվող Ակնալճի վերին ջրանցքի 1,1 կմ հատվածի վերակառուցումը, որի շահագործումով կնվազեն ջրի կորուստները, ինչը հնարավորություն կտա պահպանելու ջրման համապատասխան ռեժիմները և կավելանան նաև մշակվող հողատարածքները:

2024 թվականին նախատեսվել է ստանալ և մատակարարել 164,46 մլն,մ^3 ոռոգման ջուր, որից 108,7՝ «Ջրառ» ՓԲԸ-ից, իսկ տեղի աղբյուրներից մեխանիկական եղանակով՝ 55.75 մլն. մ^3:

<<Էջմիածին >> ՋՕԸ–ի գործադիր տնօրենի տեղակալ Ռազմիկ Գաբրիելյանը միաժամանակ նշեց նաև, որ ընկերության կողմից սպասարկվող տարածքի ջրօգտագործողների հետ ստեղծվել և ամրապնդվում են գործընկերային փոխշահավետ հարաբերությունները, ինչն անկասկած և էապես կնպաստի 2024 թվականի կայուն, հուսալի և հաշվարկելի ջրամատակարարմանը:

Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը, անդրադառնալով վերը նշված ՋՕԸ-ների գործադիր տնօրենների կողմից ներկայացված տեղեկատվությանը, մարզի տարածքում գործող ՋՕԸ-ների առաջնահերթ և կարևորագույն խնդիրը համարեց համակարգում առկա խնդիրների ժամանակին լուծումը, որն ըստ էության կնպաստի նաև ընթացիկ տարում բավարար չափով ջրամատակարարման ապահովման խնդրի լուծմանը:

Օրակարգային՝ **<<Արմավիրի մարզում ընդերքօգտագործման և հողային հարաբերությունների բնագավառներում տիրող իրավիճակի, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների իրականացման, ինչպես նաև նշված բնագավառներում ներգրավված իրավապահ և այլ մարմինների համագործակցության վերաբերյալ>>** չորրորդ հարցի կապակցությամբ զեկուցմամբ հանդես եկան Արմավիրի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը և Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի

պարտականությունները կատարող Խորեն Սարուխանյանը: Նրանք իրենց զեկուցումներում ընդհանուր տեղեկատվության կարգով ներկայացրեցին ընդերքօգտագործման և հողային հարաբերությունների կարգավորման բնագավառներում տիրող իրավիճակը Արմավիրի մարզում: Այսպես, Արմավիրի մարզպետի աշխատակազմի Գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ Արթուր Այվազյանը նշեց, որ Արմավիրի մարզում հաշվառված 34 հանքավայրերից ներկա պահին փաստացի շահագործվում են թվով 16 հանքավայրեր 11 բնակավայրերում, որից ավազի 8, քարի 3, բազալտի 5: Կատարված ուսումնասիրություններից պարզվել է, որ այս բնագավառում օրինախախտումները հիմնականում կապված են հողի ոչ նպատակային նշանակությամբ օգտագործման և իրենց հատկացված տարածքից դուրս հանքարդյունահանման հետ: Մասնավորապես՝

1.«OUS Շին» ՍՊԸ–ն Մերձավան բնակավայրում տնօրինում է 3 հա հողատարածք, որից 1,28 հա գյուղատնտեսական նշանակության է:

2. «Էջմիածնի շինանյութեր» ԲԲԸ–ն Մերձավան բնակավայրում տնօրինում է 18 հա հողատարածք, որից 14,3 հա այլ հողատարածք է:

3. «Տնաշին Աշոտ» ՍՊԸ–ն Արևադաշտ բնակավայրում տնօրինում է 8,48 հա հողատարածություն, որից 6,83 հա գյուղատնտեսական նշանակության է:

Հաշվի առնելով մարզի համապատասխան համայնքներում ընդերքօգտագործման և հողային հարաբերություններում հնարավոր օրինախախտումները և այդ երևույթները կանխելու համար համարժեք իրավական միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը, ելնելով դրանց նպաստող պայմանները բացահայտելու կարևորությունից անհրաժեշտ է լիարժեք և արդյունավետ իրականացնել ոլորտի իրավահարաբերությունները կարգավորող օրենսդրական և այլ իրավական ակտերով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները, ձեռնարկել բոլոր միջոցները օրինականությունն ապահովելու և օրինախախտումների պատճառներն ու դրանց կատարմանը նպաստող պայմանները բացահայտելու և վերացնելու համար:

Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետի պարտականությունները կատարող Խորեն Սարուխանյանն իր զեկուցմամբ նշեց, որ Արմավիրի մարզպետի աշխատակազմի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների մասնակցությամբ համայնքներում իրականացված մշտադիտարկման արդյունքում արձանագրվել են հողամասերի ոչ նպատակային ու արդյունավետ օգտագործման դեպքերի ավելացում՝ ընդերքօգտագործման բնագավառում: Արձանագրվել են նաև դեպքեր, երբ, Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն՝ պարզեցված կարգով, ձկնաբուծության նպատակով իրականացվել է հողամասի նպատակային նշանակության փոփոխություն, սակայն հետագայում տարածքն օգտագործվել է ավազարդյունահանման նպատակով, որը ևս օրենսդրական խախտման հիմք է հանդիսանում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմավիրի մարզն ունի գյուղատնտեսական ուղղվածություն, իսկ ընդերքի օգտագործման դեպքերի գերակշռող մասը արձանագրվել է գյուղատնտեսական նշանակության հողատարածքների վրա, ընդերքի օգտագործման նպատակով շրջակա միջավայրին հասցվող վնասների վերականգնումը դառնում է գրեթե անհնար:

Ի դեպ, Հողային օրենսգիրքը և դրա հիման վրա ընդունված մի շարք նորմատիվ ակտերը կարգավորում են տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունը հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության կազմակերպման և իրականացման բնագավառում: Հողային պաշարների օգտագործման ու պահպանման խնդիրներն արդյունավետ և լիարժեք լուծելու համար տեղական ինքնակառավարման մարմինները պետք է պատշաճ վերահսկողություն իրականացնեն հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների կատարման, հողամասերն ըստ նպատակային և գործառնական նշանակության օգտագործելու, հողօգտագործման սահմանների և սահմանանիշերի, ընդհանուր առմամբ հողային պաշարների պահպանմանն ուղղված միջոցառումների կատարման նկատմամբ:

Հիմք ընդունելով վերոգրյալը առավել հրատապ է դառնում շարունակաբար հետևողական լինելն օրենսդրական պահանջների խախտմամբ հողային աշխատանքների իրականացման դեպքերի բացահայտման, կասեցման և օրենքով սահմանված կարգով հետևանքների վերացմանն ուղղված պարտականությունների պատշաճ իրականացման գործում, համագործակցելով նաև ոլորտում ներգրավված իրավապահ մարմինների հետ:

Զեկուցողը միաժամանակ տեղեկացման կարգով հայտնեց, որ վերջին հինգ տարում Արմավիրի մարզպետի աշխատակազմ է ներկայացվել ընդերքի օգտագործման նպատակով ընդհանուր 31.42 հա հողամասի նպատակային նշանակության փոփոխության առաջարկություն, որից 11.65 հա-ի մասով տրվել է դրական եզրակացություն/ավազի արդյունահանում/:

Օրակարգային չորրորդ հարցի առնչությամբ ելույթներով հանդես եկան Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը և Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանը:

Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը ընդհանուր կարգով մասնավորապես նշեց, որ միայն 2023 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության տարածքում տեսչական մարմնի կողմից իրականացված ստուգումների արդյունքներով արձանագրվել է, որ ընդերքօգտագործող շատ ընկերություններ ըստ էության չեն վարում երկրաբանական, մարկշեյդերական քարտեզագրում, ամենօրյա շարժի գրանցամատյան և այլ փաստագրություններ: Ի դեպ, երկրաբանական և մարկշեյդերական քարտեզագրումը (երկրաբանական քարտեզներ՝ երկրակեղևի որևէ տեղամասի երկրաբանական կառուցվածքը արտահայտող գծագրեր, մարկշեյդերական գործ՝ հանքափորվածքներում կատարված տարածական-երկրաչափական չափումների տվյալները՝ օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ժամանակ ու դրանց փաստաթղթավորումը) ունեն առանցքային նշանակություն հանքարդյունաբերության գործընթացում, որի բացակայությունը բնականաբար շատ դեպքերում հանգեցնում է նրան, որ ընկերությունների կողմից ընդերքօգտագործման հետ կապված գործունեությունը ծավալվում է լեռնահատկացման

ակտով և օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվությամբ տրամադրված ընդերքի սահմաններից դուրս և չեն ապահովվում օգտակար հանածոների պաշարների շարժի հավաստի հաշվառում: Հայտնաբերված բոլոր դեպքերով ստուգումների արդյունքում ընկերություններին տրվել են համապատասխան հանձնարարականներ՝ խախտումները վերացնելու համար:

Այնուհետև, Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Հովհաննես Մարտիրոսյանը իր մտահոգությունն արտահայտելով ընդերքօգտագործման բնագավառում Արմավիրի մարզում առկա իրավիճակի վերաբերյալ, հայտնաբերված ապօրինի արդյունահանման դեպքերի թիվը կազմում է 117, որից Արմավիրի մարզում՝ 31: Սա, իհարկե, բացասական իմաստով բարձր ցուցանիշ է համարվում, քանի որ ապօրինի արդյունահանման նշված դեպքերով առկա է հետևյալ պատկերը՝

Արմավիր 154,338,824.1/հասցված վնասի չափը/, 31/քանակը/, 1,053,733.7 /ծավալը/,որից՝

- տուֆ 190,534.0/ հասցված վնասի չափը /, 1/քանակը/, 1,470.0 /ծավալը/,
- բազալտ 13,293,617.0/ հասցված վնասի չափը /, 3/քանակը/, 82,346.2 /ծավալը/,
- ավազակոպճային խառնուրդ /ԱԿԽ/ 140,854,673.1/հասցված վնասի չափը/, 27քանակը/, 969,917.5/ծավալը/:

Ապօրինի ընդերքօգտագործման բնագավառում նմանատիպ խախտումները բացառելու նպատակով անհրաժեշտ է գործնականում ակտիվացնել նաև մարզի համայնքների վարչական ղեկավարների գործունեությունը, քանի որ նրանց անմիջական պատասխանատվությամբ իրականացվելիք ամենօրյա հսկողությամբ առավել դրական արդյունքներ կարձանագրվեն:

Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանը, շնորհակալություն հայտնելով Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանին Արմավիրի մարզի խորհրդի նիստին իրեն մասնակցելու հրավերի և վերը նշված օրակարգային հարցի քննարկմանը ելույթով հանդես գալու հնարավորության համար, մասնավորապես նշեց, որ ընդերքօգտագործման բնագավառում պետությանը պատճառված վնասի վերաբերյալ խնդիրները մշտապես գտնվում են դատախազության օրակարգում և յուրաքանչյուր հնարավորություն և հարթակ

պետք է օգտագործել այդ խնդիրների լուծումների մասին խոսելու համար: Նա ողջունելի համարեց նշված կարևոր հարցի քննարկումը օրակարգում ընդգրկելը, քանի որ ընդերքի ապօրինի օգտագործմանն առնչվող հանցագործությունները ոչ միայն վնաս են պատճառում հողին, շրջակա միջավայրին կամ բնական պաշարներին, այլև մեծ չափերի վնաս են պատճառում նաև պետության շահերին: Պետությանը վնաս պատճառելու դեպքում դատախազությունն է պատվիրակված պետության անունից հանդես գալու որպես ներկայացուցիչ և որքան կարևոր է պատճառված վնասը վերականգնելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելը, էլ ավելի կարևոր է այդպիսի վնասների պատճառումը բացառելու ուղղությամբ համագործակցված և արդյունավետ աշխատելը: Այս առումով պետական որևէ օղակի անգործությունն ուղղակիորեն նպաստում է հանցանքի կատարմանը: Պետք է փաստել, որ նման դեպքեր արդեն իսկ արձանագրվել են, որոնց արդյունքում քրեական վարույթներ են նախաձեռնվել պաշտոնատար անձանց կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու, ինչպես նաև պաշտոնեական անփութության հատկանիշներով:

Վիճակագրական տվյալներով չծանրաբեռնելով իր ելույթը, Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանը հակիրճ նշեց, որ ընդերքօգտագործման ոլորտում 2022 թվականի համեմատ 2023 թվականի ընթացքում գրանցվել է հանցագործությունների թվի գրեթե կրկնակի աճ: Թեև դեպքերի աճը մտահոգիչ է, սակայն պետք է փաստել, որ նշված դեպքերը կրում են լատենտային (թաքնված) բնույթ և որպես դրական ցուցիչ պետք է դիտել այդ հանցանքների վերհանումը և բացահայտումը: Ներկայումս նախաքննության փուլում են 52 քրեական վարույթ: Ի տարբերություն նախորդ տարիների՝ այդ վարույթներով արդեն առկա են պետությանը պատճառված վնասների վերականգնումներ և այս գործընթացը շարունակական բնույթ է կրելու: Ինչ վերաբերում է հանցանքների վերաբերյալ հաղորդումներին, ապա պետք է փաստել, որ դրանք բացառապես տրվել են ՀՀ ԱԱԾ, ոստիկանության և տեսչական մարմինների կողմից, դրանցից միայն 1 դեպքում է, որ հաղորդումը ներկայացվել է համայնքի ղեկավարի կողմից:

Քրեական գործերի ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց է տալիս, որ հանցանք կատարած անձինք համայնքի հետ վարձակալության պայմանագրեր կնքելուց հետո հողի նպատակային նշանակությունը չեն փոխում, ինչի արդյունքում համայնքի բյուջե ավելի քիչ գումար է վճարվում: Ի դեպ, հողի նպատակային նշանակությունը չփոխելու պայմաններում համայնքի աշխատակիցների կողմից որևէ միջոց չի ձեռնարկվում վարչական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Ավելին, միջոցներ կիրառելու պայմաններում նաև վերջիններիս ակնհայտ կդառնար նաև հանցանքի փաստը, ինչի արդյունքում էլ համայնքի կողմից համապատասխան հաղորդում կներկայացվեր իրավապահ մարմիններ, կամ նման ահազանգը կնպաստեր հանցանքի կանխմանը: Արդյունքում, անձանց կողմից ապօրինի ձեռնարկատիրություն ծավալելու փաստը ավելի շուտ կհայտնաբերվեր հենց համայնքի կողմից մինչև իրավապահ մարմիններին հայտնի դառնալը: Հատկանշական է, որ նման դեպքերում համայնքի կողմից դրսևորած անգործությունն ինքնին ևս իրավական գնահատականի է արժանանում:

Ամփոփելով ելույթը, Արմավիրի մարզի դատախազ Վահան Սարգսյանը վստահեցրեց, որ մարզի իրավապահ մարմիններն ունեն կամք նշված հանցագործությունների դեմ պայքարելու և պայքարում են ամենօրյա ռեժիմով և այդ պայքարում ակնկալվում է նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործուն աջակցությունը:

Օրակարգային հարցի քննարկման և մտքերի փոխանակման արդյունքներով Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը համայնքի վարչատարածքում ընդերքօգտագործման տարածքներ ընդգրկող համայնքների ղեկավարներին առաջարկեց՝

1. ընդերքօգտագործման և հողային հարաբերություններում հնարավոր ու առկա օրինախախտումները կանխելու և բացահայտելու նպատակով խստագույնս առաջնորդվել Կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի «Իրավաբանական անձանց և քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի սահմաններում ընդերքօգտագործման կարգը սահմանելու» N 152-Ն և Կառավարության 2019 թվականի մայիսի 10-ի «Հողագրունտի հանույթի կարգը սահմանելու մասին» N

572-Ն որոշումների պահանջներով և բացառել առանց հողի օգտագործման պայմանագրի և/կամ առանց հողի նպատակային նշանակությունը փոխելու ընդերքօգտագործման աշխատանքներ իրականացնելը, ինչպես նաև նախքան ընդերքի օգտագործման նպատակով հանրային լսումներ կազմակերպելը և դրական եզրակացություն տալը բազմակողմանի ուսումնասիրել ընդերքի օգտագործման առաջարկությունը, դրսևորել խորքային և մասնագիտական մոտեցում, առաջնորդվելով բացառապես հողերի արդյունավետ օգտագործման և հանրային նպատակահարմարության առաջնահերթությամբ, նշված գործընթացում առանց բացառության պարտադիր կարգով ներգրավելով նաև համայնքների վարչական ղեկավարներին:

2.օրինախախտումների կանխման ուղղությամբ միջոցներ իրականացնելիս սերտորեն համագործակցել ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության, հարկային, ինչպես նաև վերահսկողություն իրականացնող այլ մարմինների հետ:

Օրակարգային հարցերի քննարկմամբ և արդյունքների ամփոփմամբ, Արմավիրի մարզպետ Դավիթ Խուդաթյանը Արմավիրի մարզի խորհրդի նիստը հայտարարեց ավարտված:

2024-04-08 16:54:34 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԴԱՎԻԹ ԽՈՒԴԱԹՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի

աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության
պետ՝Դավիթ Դավթյան